ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

« ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ Պ-423-17.12.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՆԵՐԻ

N	**Առաջարկության հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագծից հանել այն կարգավորումները, որոնք վերաբերվում են պատվիրատուի նշած հասցեում ծառայությունների մատուցման մասով օրենսգրքում փոփոխություն կամ լրացում կատարելուն:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հանել նախագծի 2-րդ հոդվածը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը դարձնել հոդված 2 և շարադրել նոր խմբագրությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

		.	Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասում «օբյեկտի,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետի,» բառերով, 2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝ «Շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազ-մակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնի) վրա սույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ կետով նախատեսված՝ ապրանքի անվանման և ապրանքային դիրքի, ծառայության անվանման և կոդի, գնվող ապրանքի քանակի, դրա չափման		

			միավորի տպագրումը պարտադիր է՝ անկախ Կառավարության սահմանած կարգից ու ժամ-կետներից:», 3) 3-րդ մասի 3-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի մի-ջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնար-կատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համա-րանիշը» բառերը:		
4.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում հղում կատարված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի վերնագիրն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին՝ միաժամանակ ճիշտ նշելով Օրենսգրքի ընդունման տարեթիվը	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ԱԺ պատգամավոր	Նախագծի 1-ին	Նախագծի 1-ին հոդվածում օգտագործված «առեւտրիկետեր	Ընդունվել է	Ընդունվել է

	Գևորգ Պապոյան	հոդված	(այդթվում՝շարժականառեւտրիկետեր եւ տրանսպորտայինմիջոցներիցապրանքներիվաճառք)» հասկացությունը փոխարինել «*շրջիկ առեւտրի կետեր» հասկացությամբ:*		
6.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանել «փոփոխություններ»բառը	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 04-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 380-րդ հոդվածի 1-ի մասը «օբյեկտների,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի,» բառերով»:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի նոր 2-րդ հոդված	Նախագծի նոր 2-րդ հոդվածի 1-ին մասում «օբյեկտի,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետի,» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի նոր 2-րդ հոդված	Լրամշակված նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն,	Ընդունվել է	Ընդունվել է

			ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերը:		
10.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի նոր հոդված 3	Նախագծում ավելացնել նոր 3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. Օրենսգրքի 384-րդ հոդվածում՝ «1) 1-ին մասի 1-ին կետը «վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով, 2) 4-րդ մասի 2-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «,իսկ շրջիկ առևտրի կետերի մի-ջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առտրի կետ հանդիսացող ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերով, 3) 7-րդ մասը «վայրի տարածքի» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետի» բառերով, իսկ «տարածք» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետ» բառերով, 4) 8-րդ մասը «տեսանելի մասում» բառերից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի)	Ընդունվել է	Ընդունվել է

			վրա» բառերով:»:		
11.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի նոր հոդված 4	Նախագծում ավելացնել նոր 4-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «1) 1-ին մասը «պահին և վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով, 2) 2-րդ մասի 1-ին կետը «այդ վայրում» բառերից հետո լրացնել «իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով, 3) 4-րդ մասի 1-ին կետը, 5-րդ մասի 1-ին կետը և 8-րդ մասը «առևտրի օբյեկտում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, 4) 9-րդ մասը «առևտրի օբյեկտներում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կե-տերում» բառերով, 5) 10-րդ մասը «տեսանելի տեղում» բառերից հետո լրացնել «, շրջիկ առևտրի	Ընդունվել է	Ընդունվել է

			կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով: »:		
12.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի նոր հոդված 5	Նախագծում ավելացնել նոր 5-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երրորդ ամսվա 1-ից» :	Ընդունվել է	Ընդունվել է